

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի:
Առանձին հատարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мелікъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 255.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններ հայտարարւում են:
Խրագրանշիւր բառին 2 կոպեկի:
Տէլէֆոն № 255.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացնում ենք և մեր ձայնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մի հետաքրքրական հարց. Նամակ Առաքելի. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՍԻՐ. ՆԵՐ.— ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարսկաստանի բերքեր:

ՄԻԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՁԱՅՆԸ

Այսօր, հոկտեմբերի 8-ին, վրաց դերասանական խումբը վրաց ազնուականութեան թատրոնում տօնում է վրաց մշտական խմբի գոյութեան քսանամեակը: Վրաց թատրոնական խումբը, ինչպէս և հայոց թատրոնական խումբը, առաջ է տարել և ներկայումս առաջ է տանում իր գործը, յանձն առնելով բազմաթիւ ներդրումներ և անձնագործութիւն: Ինչպէս թատրոնական պարագմունքը դեռ չէ դարձել այնքան չափաւոր գործ, որ կարողանար լիովին ապահովել այն անձին, որն իրան նուիրել է բեմին և այդ պատճառով դերասաններին շատերը հայթայթում են իրանց ապրուստը կողմնակի պարագմունքներով և մասնաւոր միջոցներով: Միայն բացառիկ անձնաւորութիւններ ճանաչում են իրանց համար միակ զբաղմունքը թատրոնը և նրանց դուրս այլ ևս ոչ մի ուրիշ պարագմունքի ձեռք չեն դարձնում:

Մի քան սակայն անկասկած է և վերին աստիճանի միջնորդական, այդ այն է, որ թատրոնական գործը վրաց մէջ ստացել է մեծ ժողովրդականութիւն և ճանաչւել է իւրեւ հասարակական օգտաւէտ և կրթական կարևոր գործօններից մէկը: Վրաց հասարակութիւնը սիրում է իր բեմը և ազգութիւն է այն պիւններին, որ տալիս է իւրերեսը: Թէ տեղական կենցաղը վերցրած է թէ եւրոպական բեկորաւոր պատկանող պիւններ շարժում են հետաքրքրութիւն և աւելի տալիս մտածողութեան:

Մեզ համար, ուր ապրում ենք վրացիներ իր հետ միատեսակ պայմաններում և մերձակապէս գտնուում ենք հասարակական զարգացման մի և նոյն աստիճանի վրա, հաճելի է արձանագրել թատրոնական խմբի գործունէութեան երկու տասնեակ տարեկան գոյութիւնը և ցանկաւ, որ թատրոնական գործի համար կազմվեն աւելի նպաստաւոր պայմաններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆ ՔՐԻԳԵՐԸ

(Նամակ Թարգման)

Ատրպատականի ներկայ դատարար Նիզամի-Սալթանէ Հիւսէյնի Պուլի խանի տեղ հասնելուց յետոյ, երկուստ սովորական դարձած կարգերի համաձայն՝ բոլոր նշանաւոր պաշտօնականները՝ նախագահները (Հաքիմ) և գաւառապետները փոփոխեցան, սրանց հետ միասին ամեն մի նախագի նշանաւոր աստիճանաւորները տեղի տուին նորերին: Պէտք է իմանալ, որ Պարսկաստանում որոշ և իրարից անկախ հիմնարկութիւններ չը կան: Ամեն նախագիւմ հաքիմը և՛ ազմիրխատարտօր է, և՛ դատարար, և՛ ֆինանսական գործակալ, և՛ կալուածական խնդիրների վերահսկիչ, և՛ զօրքերի հրամանակաւ, մի խօսքով բացարձակ միապետ, ինչպէս Շահը ամբողջ Պարսկաստանում: Այնպէս որ իւրաքանչիւր հաքիմ ունի իր պաշտօնակալների սվիտան, ուր որ գնայ իր հետ տանում է ստորադրեալներին և եթէ պաշտօնաւորիկ է լինում, իր սպասաւորներով փոխադրվում է մի ևս բիւրջ տեղ, կամ մի նոր պաշտօնի: Միայն արտաքին գործերի միջնորդի գործակալները (քարգուլար և սէր-փէրէստ), պոստի, հեռագրի տեսուչները և այլման էլ մաքսապետները ազատ են, մասամբ անկախ են հաքիմներից:

Թոնական գործի համար կազմվեն աւելի նպաստաւոր և արդիւնարար պայմաններ, որոնք վերջ դնելին թատրոնին նուիրված անձանց զրկանքներին և զոհերին: Վրաց թատրոնական գործը ունեցել է և մի որոշ կապ հայ թատրոնական գործի հետ: Մեր բեմի այն պիւնները, որոնք ունեցել են տեղական մեծ նշանակութիւն, անցել են վրաց բեմը և այդպիսով ծանոթացրել են վրաց հասարակութիւնը հայ թատրոնական գործունէութեան հետ: Անկասկած, երկու հարեան ազգերի կենցաղը, որ շատ կետերում միմեանց նման է, արտագրում է նման հասարակական երևոյթներ և խելացի փոխադարձութիւնը կարող է օգտաւէտ լինել երկու ազգութիւնների թատրոնական գործին: Ցանկանանք, որ այդ երկու ազգութիւններին աջողվի միադարձ ոյժերով արդարեւ հարստացնել տեղական թատրոնական գործունէութիւնը, որ ներկայումս գտնվում է շատ աղքատ և անմիջիցա վիճակի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼ

Էջմիածնի ձեռնարկում տօնից իր քսանհինգ ամեակը: Սովորութիւն է, առհասարակ, մասնաւոր մեծ պահանջներ չունեցող, ճշգրիտ գործերի համար տնտեսութիւնների ժամանակ միայն ներքուքներ կարգաւ և ցնծութեան աղաղակներ բարձրացնել: Բայց յօբելանսները պէտք է ունենան և մի այլ, աւելի կարևոր նշանակութիւն: Նրանք պիտի պատկերացնեն հիմնարկութեան անցեալ կենցաղը, ցոյց տան, թէ ինչ պակասութիւններ է նա ունեցել, ինչ է արված այդ պակասութիւնները վերացնելու համար: Մենք ձեռքի տակ չունենք այդ դրութիւնը ցոյց տուող նիւթեր. ասում են, որ Էջմիածնի պիտի հրատարակել իր գաղտնի քսանհինգամեակ պատմութիւնը: Բայց մինչև այդ մենք կարող ենք դիմել այն կցկալող յիշողութիւններին, որոնք երևացին մեր մասնաւոր մէջ յօբելանսի առիթով: Այսպէս, «Մշակ» մէջ տպված յիշողութիւնները թեթև կերպով լուսաբանելին այն չըլանը, երբ ձեռնարկի տեսուչ էր Գաբրիէլ արքեպիսկոպոս Ալվազեան—մի շրջան, որ ամենազեղեկին է համարվում ձեռնարկված, դեռ ժողովուրդները դրանից իրանց մաս ու բաժին էլ էին կորցրած:

Պաշտօնէութեան շուտ շուտ փոփոխութիւնը եկամուտի մեծ աղբիւր է մեծամեծ պաշտօնեաների համար և կործանիչ երկրի կալուածատիրութեան, վաճառականութեան, մասնաւոր ժողովրդի համար: Ինչու Նիզամի-Սալթանէ, ներկայ Ատրպատականի կուսակալը, Թէհրանից նոր էր դուրս եկել, որ ամեն մի նախագից, նախագահականների, նշանաւոր խաների, բեկերի, աղաների, կալուածատէրների ներկայացուցիչները դիմել էին Թարգման, որ պատրաստութիւններ տեսնեն նուէրներ ներկայացնելու կուսակալին, որ քաղցր լինի նրա հայեացքը դէպի իրանց տէրերը. ահապէս իրաւացիում, քրթմնիչին էր տրեւ մեծ կողմ, երբ լսում էին երկու պաշտօնակալի խոսուածութիւնները, արդարաւորապէս լիովին լիովին ընտրելով իրանց իրաւունքները և անել անունը: Ընդառաջ երբեք փէշեքաչ, ուրիշները թանգաղին գորգեր, աղբիւ կերպաններ, ոսկի և գոհարէ զարդեր իսկ հեռաւանդներ փող էին պատրաստում, քանի որ նրանց քաջ յայտնի էր, որ մայրաքաղաքէն՝ Փէհլաւից եկողի սիրտը ամենից շատ դէպի մասնաւոր է հակված: Եւ ինչպէս պատմում են, երկու ամսի ընթացքում կառավարչապետը իրեն թէ 200,000 թուման փէշեքաչ է ստացել (մոտ չորս հարիւր հազար ռուբլի):

Յայտնի բան է, ոչ պաշտօնական խան-խաններ, ոչ կալուածատէր պաճառականներ և ոչ էլ բեյ զադա, խանզադա միւլադարը իր գրպանից, իր դառն քրտնեղով աշխատածից չէր դաճեցրել: Այդ բոլորը դառնաշխատ երկարագործի, մշակի կաշին բերթելով էր ժողոված և ու-

նարանի պատմութեան մէջ: Բաւական է իմանալ, թէ հանդուցեալ Ալվազեան ինչ ուղղութեամբ պատկանող դպրոցական գործիչ էր (իսկ դրա համար պէտք է ծանօթանալ Նալիբեան, մասամբ և Մուրադեան վարժարանների պատմութեան հետ, այլ և աչքի անցկացնել նրա գրական գործերը) և ձեռք կը հասկանանք, թէ ինչ էր ձեռնարկի այդ փայլուն շրջանը: Մի ուրիշ նմուշ էլ բերում է «Տարազ» շաբաթաթերթի մէջ տպված յիշողութիւնների հեղինակը:

Կրօնական դասախոսն էր հանդուցեալ Կիրեղ վարդապետ Սրապեան, մի ինքնուրու և վերին աստիճանի արամիտ ու յաճառ մարդ. տեսչից յետոյ սրա ազդեցութիւնն ամենից մեծ էր աշակերտների վրա. չը նայելով սրա թերութիւններին, իր աշխատասիրութեամբ և մաքուր կենցաղավարութեամբ մեծ ազդեցութիւն էր գործում մեզ վրա Կիրեղ հայր սուրբը: Մի նմուշ հայր սուրբի յաճառութեան. նա շարունակ պնդում էր, որ բոլոր գիտութեանց աղբիւրն է Ս. Գրքը, իսկ բոլոր պատմութիւններից ստուգապատումն էր Մովսէս Խորենացին. ուստի հիմնվելով այն բանի վրա, որ Խորենացու ասելով Արամը Փոքր Ասիայում հայերէն լեզուն բռնի մտցրել էր, իսկ Արտաշէսը գրաւել էր Յունաստանը, պնդում էր, որ Հոմերոսն հայ է. մենք դիմաբոսում էինք՝ հայր սուրբ, Հոմերոսը յոյն էր, յունարէն է գրել. վերջապէս Արամը հայերէնը տարածեց Փոքր Հայքում միայն, Արտաշէսը շատ դարեր յետոյ էր Հոմերոսից և այլն, նա վերջապէս ընդհանրեց մեզ և սասցա, զմարմ, մէյնը ըսէ՛ հա, Հոմերոս հայ էր, մենք ասացինք՝ ճշմ, Հոմերոս հայ էր, և՛ չէ՛ ասէ՛ պրծմնք, դուք ըսէ՛ք, որ Հոմերոս հայ էր:

Եւ այսպիսի անսպառ «իմաստութեամբ» լցված մի մարդ այնքան մեծ հեղինակութիւն վայելում էր ոչ թէ մի տեղ-Թոգիլի դպրոցում, այլ այն հիմնարկութեան մէջ, որ պիտի պատրաստէ ուսեակ, հասկացող և ժամանակի պահանջներին համապատասխանող հոգևորականներ: Բայց սա անցած-գնացածից է, զբարի՛ հին ժամանակների գործ կարող է համարվել, թէ և Հոմերոսին զմեծ հեղինակութեան ոյժով հայ դարձնողը հանձնարի նման մի բան է Հայաստանայ տիրապետների համար: Իրենք ներկայ ժամանակին Յօբելանսի օրը այժմեան տեսուչ կարգաւ է մի ճառ, որ տպված է նոյն «Տարազ»-ում: Այդ ճառի մէջ տեսուչը ձեռնարկում շարունակ անուանում է բարձրագոյն դպրոց, բայց ներքին չէ կրել ցոյց տալու թէ ինչ հանգամանքներ, ինչ փաստեր կան այդ անունը հա-

ղարկված, դեռ ժողովուրդները դրանից իրանց մաս ու բաժին էլ էին կորցրած: Բայց խան-խաներ, բեյլադաններ և ուրիշ կալուածատէրերը, որպէս զի աւելի դուր գան կառավարչապետին, մրցում են իրար հետ, աւելի մեծամեծ դոճաքներով լիցնելով պաշտօնականների աչքը մասնաւոր, սիրելի դառնալու, բարձր դասվելու հրաւերներով, ինչպէս նաև դատարաններում արդարաւորաւ համար: Ընդհանրապէս մրցութիւնը այն աստիճանի է հասել, որ կալուածական խնդիրների համար համարեա մշտապես դատաւարութեան մէջ են կալուածատէրերը և նպատակներին համարելու, խօսքերը, կամքերը կատարելու համար միջոցների մէջ խտրութիւն չեն դնում, մասնաւոր լիզու միջոցներով:

Բայց հասարակական չարքը այնքան մեծ է, չուտ-չուտ պաշտօնականների փոխվելուց այնքան տանջվել են, այնքան զրկանքների մատուցվել, որ բերել կալուածատէրերը Սուլէ-Բուլաղի մարդէն մի առիթի էին սպասում այդ ընդհանրաւոր չարքի առաջին առնելու համար: Առիթն արածված ըրեցին բեյլերին և աղաներին, որոնք այժմ սպասում են անվիւր երկրորդ, եթէ իրանց արդար պահանջներին բաւարարութիւն չուտվի չը արվի մի դրական օրէնսդրութիւնով:

Օգոստոսի սկզբներին Ատրպատականի կա-

ռարակութեան առաջ արդարացնելու համար: Ինչպէս երևում է, բաւերը պայմանական իմաստով գործ ածելը մեղանում շատ առաջ է դրնացել մի խղճուկ փառասիրութեան լիացում տալու համար: Ուրիշ կերպ ինչպէս հասկանանք տեսչի հետեւեալ խօսքերը:

«Պէտք է նկատել ի միջի այլոց, որ ձեռնարկը իր 25-ամեայ գործունէութեան մէջ, ունեցել է ուսումնական յառաջադիմութեան տարբեր շրջաններ: Գաբրիէլ եպիսկոպոսի օրով ձեռնարկում զարգանում է լեզուագիտութիւնը (!), Արշակ Նահապետեանի ժամանակ առաջ է գնում փիլիսոփայութիւնը (!), իսկ մոտաւորապէս 90-ական թվականներից սկսած մինչև այժմ ձեռնարկը իսկապէս իր բուն նպատակին է ծառայում, հիմնադրել իդներ կատարել է ջանքում, այն է դարկ տալով կրօնական-աստուածաբանական մասնագիտութեան և ներշնչելով իր սաներին խորապէս այդ ոգին, արտադրում է եկեղեցու սպասաւոր լի-նելու արժանի հոգևորականներ: Ցանկալի ուղղութեան առաջին դարկ տուող լինում է Օրմանեանի իր ուսուցչութեան օրով:

Այսպիսի փառաւոր յանձնարարականները յամենայն դէպս այն են ապացուցանում, որ «կրօնական-աստուածաբանական մասնագիտութեան» սիններից մէկը համարվող Արապետ վարդապետը բարձրագոյն դպրոցի տեսուչ չէ, թէ և նա իր ունիւրիւններին առանց այլ և այլութեան ասել է. «Բայց թէ որ չափով է ձեռնարկը հասել բարձրագոյն դպրոցի գաղափարին, որ չափով է իր ծրագրած նպատակները առաջ տանում, իրագործում, դա աւելի ցոյց կը տայ ապագան, քան ցոյց են տուել անցեալն ու ներկան: Ապագան... ինչ խօսք: Երբ շատ կը բազմանան Օրմանեանի «կրօնական աստուածաբանական մասնագիտութեան» ձեռքը, այն ժամանակ ճիշդ որ պատմութիւնը կարճաւորէ, որ Էջմիածնում բարձրագոյն դպրոց կայ: Եւ սակայն, այդ ապագային աչք դարձած այժմեան վարդապետը միանգամայն ինքնագոհ չէ: Տեսուչը չը ծածկեց որ

«Շատ ու շատ տեղերից դանդաղներ են լսվում, թէ ձեռնարկի արդիւնքը քիչ է, ձեռնարկը այս չէ անում, այն չէ անում: Բայց պատարժան հայ հասարակութիւնը բոլորովին ի նկատի չէ ամենում, որ կրթական հաստատութեան ըստ ամենայնի ապահովացման, բարեկեցիկ դրութեան մէջ դնելու ամենամեծ գրաւականը՝ նիւթականը, տնտեսականն է:

Որ առաջին փողի հեռու գնալ չէ կարելի,— այդ ամենքին յայտնի է: Բայց որ շատ ու շատ

աւարչապետ յետ կանչեց Սուլէ-Բուլաղի հաքիմին և նրա տեղ ուղարկեց նոր նախագահական Շահադա (արքայազուն) Մանուէլը: Միւրիւն, որին կոչում են Միւրթէղի-Բովլէ: Յայտնի բան է, ամբողջ նախագի ընդող միջադարձները շտապեցին իրանց մեծամեծ նուէրներով գրաւել նորեկ հաքիմի սիրտը, որը, ինչպէս պատմում են, անչափ խիտ կարգաւորէ մարդ է և իր գլուխը բարձր պահել գիտէ: Ինչպէս խօսում են, ու քրդական կալուածատէրերից ոչ զքի երես չէ տուել, միայն սառն, ոտը վրա ընդունելութեամբ շտապելին ճանապարհել է և մեծամասնութեան չէ էլ թողել իրան ներկայաւար: Այս ընթացքը ոչ միայն դուր չէ եկել ընդող կալուածատէրերին, այլ շատերը վերաւորական են համարել նախագահների ընթացքը:

Քրդաստանի նախագահական Մանուէլը Միւրթան, որպէս զի կարողանայ սանձել ընդող միջադարձներին և իր դիրքը զօրացնել, աշխատում է ամեն կերպ թուլացնել ոչ միայն այդ կալուածատէր մեծամեծներին, ճնշել և դրանց ազդեցութիւնը վայր ցցել ժողովրդի աչքում, այլ ուղղւում է ընդողի սիննի հոգևորականութիւնն էլ խղճացնել, ընկճել, նրա հեղինակութիւնն էլ ստորացնել: Սուլէ-Բուլաղում թէ և զլիւսուր դադրին Միւրթա Ալին է, բայց ժողովրդի մէջ մեծ դեր խաղացող Միւրթա Ֆէթա հապին է, որը իր ճարպիկութեամբ և հանձնարով շատ քիչ մասնաւոր մեծ հաշակ է ստացել:

Պէտք է իմանալ, որ Պարսկաստանում իսլամ հոգևորականութեան և իշխանութեան մէջ մեծ մրցում կայ գերիշխանութեան համար, ոչ այնու-

